

Քիւ 28160
Հոկտեմբեր 14, 1971

Մեծայարգ
Տիար Սահակ Ազկիւլեան
Ասենապետ ծխական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Րէյսին, Ուիս.

Սիրելի Գրն. Ազկիւլեան,

Համաձայն ծխական Խորհուրդիդ հետ մեր ունեցած խորհրդակցութեանց, Րէյսի-
նի Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ մեր համայնքին համար հոգեւոր հովիւ կը նշա-
նակենք Տ. Կիւրեղ Զհնյ. Եթէնէկեանը որ ներկայիս հովիւն է Մօնթրէալի Ս.
Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ:

Տ. Կիւրեղ Զհնյ. Եթէնէկեան Րէյսին պիտի փոխադրուի 1971 նոյեմբեր 16ին:
Ծխական Խորհուրդը պիտի հոգայ հոգեւոր հովիւին հետեւեալ կարիքը--

1. Մօնթրէալէն Րէյսին իր գոյքերուն փոխադրութեան ծախքը:
2. Ընասնիքին ընկուլթիւնը եւ եղբայրացի ծախքերը: (Տուէին հեռախօսին եւ
ընասնիքին կողմէ կատարուած ծախքը Տէր Հայրը պիտի վճարէ:)
3. Հոգեւորականաց խմբական ապահովագրութեան փրիմիումին կէսը, իսկ երկրորդ
կէսը հովիւը կը վճարէ:
4. Հովիւը իր անձնական ինքնաշարժը պիտի գործածէ ծխական գործին համար եւ
ծխական Խորհուրդը հովիւին ինքնաշարժին վրայ ապահովագրութիւն պիտի առ-
նէ, վճարելով մօտաւորապէս 100-150 տուարի փրիմիում:
5. Ինքնաշարժի կազին համար ծխական Խորհուրդը պիտի վճարէ շարաքական հինգ
տուար:
6. Հովիւին շարաքական թոշակը պէտք է ըլլայ նուազագոյն 100 (հարիւր) տուար:
7. Ծխական Խորհուրդը առջին հինգ տարիներուն համար ինքնաքերաքար յաւելում
պէտք է կատարէ հովիւին շարաքական թոշակին վրայ շարաքական 5 (հինգ) տու-
ար:

Տ. Կիւրեղ Զհնյ. Եթէնէկեանին հաղորդած ենք իր փոխադրութեան մասին: Ստո-
րել կը գրենք իրեն հասցէն եւ հեռաձայնի թիւը: Հաճեցէք վերջնական կարգադրու-
թեան համար հաղորդակցիլ իրեն հետ:

Rev. Garegh Yatenekian
10670 Acadie #21
Montreal, Quebec, Canada
Tel; 354-0103

Սիրոյ ողջունել
ԹՈՐԳՈՄ ԱՐԵՎԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 28162
Հոկտեմբեր 14, 1971

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ Բհնյ. Եթէնէկեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Մօնթրէալ.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Համաձայն Ձեզի հեր մեր ունեցած իօսակցութեան, Ձեզ հոգեւոր հովիւ
կը նշանակենք Րէյսինի (Ուոքհիլըն) Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ մեր
համայնքին: Րէյսինի մեր համայնքին հովուութիւնը պիտի ստանձնէք 1971
Նոյեմբեր 16էն սկսեալ: Կը ներթափանցէք օրինակը մեր նամակին՝ ուղղուած
Րէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Ժիական Խորհուրդին:

Կը յուսանք որ Աստուծոյ օգնականութեամբ պիտի կարողանաք հովուել
Րէյսինի մեր համայնքը, նպաստելով հաւատացեալներու հոգեւոր, մշակութա-
յին եւ ընկերային կեանքին բարգաւաճման:

Համեցէք հաղորդակցիլ Րէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Ժիական Խորհուր-
դի ատենապետին հետ վերջնական կարգադրութեանց համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՁԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Mr. Sahag Akgulian
St. Mesrob Armenian Church
1326 State Street
Racine, Wisc. 53405

Քիւ 28720
Հոկտեմբեր 26, 1972

Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,


Ձերդ Սրբութեան առ ի գիտութիւն կը հաղորդենք թէ Բէյսիւնի մեր համայն-
քին Ս. Մեսրոպ եկեղեցին օծուած էր օրուան Առաջնորդ հրանաշնորհ Տ. Տիրայր
Արք. Յովհաննէսեանի ձեռամբ 1925 թեկտեմբեր 25ին: Եկեկեղեցւոյ շէնքը
յարմարութիւն չունէր ծուխին ածող հոգեւոր եւ կրթական գործունէութեանց
կանոնաւոր ընթացք տալու համար: Այդ պարագան եւ տեղւոյն դիրքին ալ հետը-
գետէ նուաստացալուն հանգամանքը նկատի ունենալով՝ համայնքը ծրագրեց քա-
րեկեցիկ թաղի մը մէջ զանուող իր սեփական ընդարձակ գետինին վրայ կառու-
ցանել նոր եկեղեցի մը: Ուրախ ենք որ շինութիւնը արդէն աւարտած է եւ
օծումը պիտի կատարենք յառաջիկայ տարի Յունուար 20ի շաբաթավերջին:

Բէյսիւնի եկեղեցական համայնքը կազմակերպուած է 1918ին, եւ այն թուա-
կանէն ի վեր ստեղծած է հայկական կեանք մը, որ ունեցած է ծիական գործօն
մարմիններ, սեփական եկեղեցի, հայերէն լեզուի ուսուցման դասարաններ,
կիրակնօրեայ դպրոց, երիտասարդաց եւ տիկնանց միութիւններ, գրադարան,
եւ մշակութային ու հասարակական կազմակերպութիւններ: Համայնքէն ներս
յաջողակ են եղած ազգին կարիքներու բարձման համար բացուած արշաւները, եւ
ակնկալուած աջակցութիւնը ընծայուած է թեմի ընդհանուր յառաջդիմութեան
գարկ տուող ձեռնարկութիւններուն:

Յոնարհաբար պիտի խնդրէինք որ Ձերդ Ս. Օծութիւնը բարեհաճէր Հայրապե-
տական օրհնութեան գիրով մը հերթացնել եւ քաջալերել Բէյսիւնի Ս. Մեսրոպ
Հայց. Եկեղեցւոյ հաւատացեալ զաւակները, նոր եկեղեցւոյ կառուցման եւ
օծման առիթով:

Մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



St. Mesrob Armenian Apostolic Church

1326 State Street Racine, Wisconsin

Telephone MEIrose 4-6550

Սեպտեմբեր 28, 1972

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Մ.Ս. —

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Րէյսինի նորակառոյց Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Օձման առիթով, որ ինչպէս
յայտնի է Ձեզի տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունուարի 21 ին, պիտի
ինդրէինք Ձերոյ Սրբազնութենէն որ բարեհաճէիք Ձեր հայրական Օրհնու
թեան զիրոյ այժմէն ուղարկել մեզի, որպէսզի զայն կարողանանք պատրաս
տըւելիք Օձման Գրքոյկին մէջ տեղաւորել:

Այս առիւ նաեւ չափազանց փոփաքելի ու Օրհնաբեր է եւս ունենալ Վե
հափառ Հայրապետի կաթողիկոսական Սրբատառ Կոնդակը, եթէ երբեք Դուք
ալ, Սրբազան Հայր պատշաճ կը դատէք Ձայն ունենալ, որուն իմաստուն
կարգադրութիւնը ի հարկէ Ձեզմէ կախեալ պիտի ըլլայ:

Մաղթելով դարձեալ արեւշատութիւն եւ երջանիկ Օրեր, մատչիմ ի համ
բոյր Ձեր ս. Աջին ու մնամ որդիական սիրոյ ողջունիլ:

Վիւրեղ Քհնյ. Եթէնէկեան

Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ,

Կ Ի Ր Օ Ր Հ Ն Ո Ւ Ք Ս Ա Ն

ՐԷՅՍԻՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕՃՄԱՆ ԱՌՈՒԻ

Քերմապէս կը շնորհաւորենք Րէյսինի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ համայնքի նախանձախնդիր եւ աշխատունակ մեր զաւակները, որոնք միասնական ջանքերով կարողացան կարճ ժամանակի ընթացքին ամբողջացնել շինութիւնը նոր եկեղեցիին: Կստան ենք որ խորունկ հաւատքի եւ քաջատիկ նուիրումի արդիւնքն է այս սրանչելի իրագործումը, որուն համար հոգեկան մեծ գոհունակութիւն կը զգան արդարեւ ըլլող անոնք որոնք որեւէ կերպով ստատը հանդիսացան ընդհանուր գործին:

Աւթուն տարի առաջ հայրենի գաւառներէն եկւոր խումբ մը ազգակիցներ կայր հաստատեցին Միշիկըն Կիճի փոստընը արագ թափով ածող Րէյսին քաղաքի խոնարհ մէկ անկիւնը: Իրենց ժիր մկանները լարելով անոնք լծուեցան իրենց նոր բնակավայրի զարգացման նպաստող աշխատանքներուն: Սա եւ սիրով հետամուտ եղան ստեղծելու տոհմային աւանդութիւններով օժուել հայկական կեանք մը, որ շուտով պիտի ունենար ծխական մարմիններ, սեփական եկեղեցի, հայերէն լեզուի ուսուցման դասարաններ, զրադարան եւ մշակութային ու հասարակական կազմակերպութիւններ:

Աւելի քան կէս դարու շրջանին հաւարական մարտունակներու իր պատմութիւնը կը վկայէ թէ Րէյսինի մեր պատուական ժողովուրդը միշտ արթուն է կանգնած պատմէջին վրայ: Աննահանջ հետապնդած է հոգին լուսաւորող նպատակներ: Հիւսնալի հետեւողութեամբ կանյք եւ երիտասարդներ կամեցած են իրենց թարմ ուժերը միտնառնել այրերու աշխոյժ կողովին, որպէս զի շէն ու պայծառ մնար հայց. եկեղեցին, կանոնաւոր գործէր հայ Դպրոցը, կրօնական դաստիարակութիւն ստանային մանուկները, որակաւոր ըլլային հայ մշակոյթին նուիրուած յայտագիրները եւ յաջողակ ազգին կարիքներու բարձման համար քաջուած արշաւները, եւ տակաւին կարելի ըլլար ակնկալուած աջակցութիւնը ընծայելու թեմի ընդհանուր յառաջդիմութեան զարկ տուող ձեռնարկութիւններուն:

Սորաշէն եկեղեցւոյ օժոււմը, Յունուար 20ի շաբաթավերջին, առաւել եւս պիտի ոգեւորէ ամէն հասակի բարեպաշտները: Եւ գոհաբանական իրենց աղօթքին ու երգին շունչով լեցուած անոնք աւիւն եւ կամեցողութիւն միախառնած, պիտի ձգնին աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծել եկեղեցական եւ ազգային առաջադրութեանց պաղաւորման համար:

Կ' օրհները Ռէյսինի համայն հայութիւնը, եւ կը մաղթենք որ ամէնքը տեւապէս բոլորուած մնան շուրջը Հոգեւոր Հովիւին, Ժիւական Խորհուրդին, տիկնանց եւ երիտասարդաց միութիւններուն, որպէս զի համայնքային կեանքը միշտ մնայ զօրաւոր եւ Աստուծմէ պարգեւուած շնորհները արժանաւոր կերպով մատուցուին Հայգ. Սկեղիցւոյ բարեգարդութեան եւ Հայ մշակութային ժառանգութեանց պահպանման ու տարածման:

"Սկայք ժողովուրդք ի տաճարի փառաց Էրիստոսի, տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս":

Սիրոյ ողջունիւ

ԹԱՐԳՈՍ ԱՐՔԵՎԻԾԱԿՈՂՈՍ
Առաջնորդ

Հոկտեմբեր 24, 1972

Նիւ Եորք

ԽԻԼ 23084
Սեպտեմբեր 1, 1972

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ Զհնյ. Եթէնէկեան
Հովիւ Ս. Սեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Մատազան Ժիական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կիւրեղ,


Ժիական Խորհուրդիդ Ատենապետ Տիար Ժորժ Սթէնօֆ հեռագրածն էւ մեր բարտուղարին յայտնած է թէ 1978 Յունուար 21 կիրակիին կը փափարիք որ տեղի ունենայ Ռէյսինի Ս. Սեսրոպ նորակառոյց եկեղեցւոյ օժման կարգը:

Վերոյիշեալ թուականը կը վերապահենք նոյն նպատակին համար: Ցատղիկային պիտի իմացնենք Ձեզ մեր ժամանման մանրամասնութեանց մասին:

Դալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կարելի է դիմում կատարել նիւթական օժանդակութեան համար, ոչ եկեղեցւոյ շինութեան անունով, այլ Հայ դպրոցի դասարաններու եւ սրահի համար:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՒՐԻՍ ԱՐԵՎԻՍԿԱՐՈՍ
Առաջնորդ



St. George Armenian Church

1015 McAree Road

Waukegan, Illinois 60085

VERY REV. VASKEN TATOYAN, PASTOR

Church: Cherry 4-0424

Res. 662-3351

Օգոստոս 11 1972

Օրհնանքով մ. թորով Ա. Արքեպիսկոպոս Նազուկ-Մանուկ
Անուշիրանի հարցն էր-սրբազան Ստեփանոս
Արքեպիսկոպոս հարց

Արքեպիսկոպոս Նազուկ-Մանուկի Ա. Պետրոսի Ստեփանոսի հարցն էր-
սրբազան, սուրբ-ի, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ

հարցն էր-սրբազան, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ
հարցն էր-սրբազան, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ
հարցն էր-սրբազան, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ
հարցն էր-սրբազան, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ
հարցն էր-սրբազան, Տրեգլանի խորհուրդի մասնակցի շնորհիվ

Տրեգլանի խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Սրբազան խորհուրդի շնորհիվ սրբազան-թորով Ստեփանոսի

Քր. 23863
Փետրուար 7, 1973

Արժանաշնորհ
Տ. ԱԻԼԵՆԻ ՔՐՆՅ. ԵՐԵՎԱՆԻ
ՀՈՒՒԼ Ս. ՄԻՍՐՈՎ ԵԿԵՂԵՑՈՅ
ԻՆՏԻՆ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետրուար 1 թուակիր 2եր նա-
մակը, ուր տուած էր ծխական փողովին մէջ կատարուած շատուծեան
արդիւնքը--անուկները ընտրեալներուն եւ անոնց ստացած րուէները:

Չեզի զրկուած Հոկտ. 27 1972 թուակիր շրջանականով յանձնա-
րարուած էր Յունուար ամսուան ընթացքին զումարուած ծխական
յետոյ Առաջնորդարան զրկել հետեւեալ նիւթերը.

1. ծխական փողովին ներկայացուած տեղեկագիրները
2. ծխական փողովին ներկայացուած հլեւմտական հաշուեկշիռը
3. Առաջնորդարանէն զրկուած տպագրեալ տեղեկագիրը:

Նորին Արքայանութեան հրահանգն է որ հաճիք փութով Առաջնորդարան
զրկել (Թէեւ խոստացած էր անմիջապէս զրկել ընտրեալներուն վաւերաց-
ման պաշտօնագիրը ստանալէ յետոյ) վերոյիշեալ երեք նիւթերը եւս, որ-
պէսզի կարելի ըլլայ վաւերացնել ծխական փողովի կատարած ընտրու-
թիւնները:

Նորին յարգանքով

Սուրէն Մանուկեան
Դիւանագետ

Քիւ 23958
Մարտ 22, 1978

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ ԶՆՅ. Սթէնէլիան
Հովիւ Ս. Մեսրոպ Սկեղեցւոյ
Նախագահ ժապան Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք 1978 Փետրուար 1 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած համայն-
քիղ ժապան ժողովին մէջ կատարուած է ժապան Խորհուրդի չորս անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկսած ունենալով որ 2եր ժապան ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ժապան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած գանկին:

Մարտ 2ին 2եզի գրուած էր որ շուտով դրկէիք Առաջնորդարանէն 2եզի
դրկուած տպագրեալ տեղեկագիրը, ըսյց չէ ստացուած ցարդ: Հետեւաբար
համեցէք փութով Առաջնորդարան դրկել այդ տեղեկագիրը, ինչպէս նաև
ժապան Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ
մարմիններու վարչութեանց ասենապետներու անունը, հասցէն եւ հեռա-
ձայնի թիւը:

Օրհնելով ժապան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիսներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԷՍԳԻՍԱՊՈՍ
Առաջնորդ

Հէրրի Ազիւլիան
Հէրրի Գորանեան
2ար Կարապետեան
ճան Էսայեան

Քիւ 24485
Փետրուար 28, 1975

Մեծայարգ
Տիար Քօլ Չոպանեան
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ճիական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Ք. Չոպանեան,

Ասացած ենք Փետրուար 15, 1975 թուակիր Չեր նամակը, որով կը յայտնէք թէ Ճիական Խորհուրդիդ անդամներէն Տիար Չարլզ Տաւեան անհանգստութեան պատճառաւ ներկայացուցած է իր հրաժարականը:

Կը հաստատենք Տիար Մուրաթ Ճէնկոզեանը իբրեւ անդամ Ճիական Խորհուրդիդ, պաշտօնավարելու համար դադարեալ Տիար Չարլզ Տաւեանի տեղ մինչեւ աւարտուի անոր շրջանին, ըստ Թեմական Կանոնադրութեան:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ

Թիւ 24505
Մարտ 17, 1975

Բարեշնորհ
Կարապետ Սրկ. Հարտի
Ռէյսին.

Սիրելի Կարապետ Սարկաւազ,

Որքան ժամանակ որ Ռէյսինի մեր համայնքը հոգեւոր հովիւ չունի՝ ձեզի մասնաւոր արտօնութիւն կը շնորհենք հետեւեալ կրօնական արարողութիւնները կատարելու եւ հաւատացելոց հոգեւոր կարիքը մատակարարելու:

1.- Կատարել Հայց. Եկեղեցւոյ ըլլոր ժամերգութիւնները, բացի այն մասերէն ուր ձեռնադրեալ եւ օծեալ բահնայի մը ներկայութիւնը անհրաժեշտ է: Օրինակ, ժողովուրդը օրհնել, ``Խաղաղութիւն ամենեցուն`` ըսել եւ ժողովուրդին վրայ խաչակներել:

2.- Հոգեհանգստեան Կարգ կատարել, նոյն հասկացողութեամբ:

3.- Սուրբ Պատարագի ընթացքին սրբազործուած եւ ապա սրբատուփին մէջ պահուած Սուրբ Հաղորդութենէն մատակարարել հիւանդներուն՝ տուներու եւ հիւանդանոցներու մէջ:

4.- ``Ճաշու Պատարագի`` Կարգը կատարել Կիրակի առաւօտ կամ այլ առիթներով, եւ նախ քան արձակումը, սրբատուփին մէջ պահուած Սուրբ Հաղորդութենէն մատակարարել հաղորդուելու պատրաստ եղողներուն:

5.- Խոստովանանքի համար գործածել հաւաքական խոստովանանքի քանածեւը, առանց վերջին տունին, այսինքն՝ Հայր Սուրբ, զբեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս: Նաեւ առանց ՝Ողորմեսցի բեզ մարդասէրն Աստուած՝ արձակումի քանածեւը արտասանելու: Ասոնց փոխարէն կարդալ Սարկաւազի Զարոգը՝ ``Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով գոյոյս միածին Որդւոյն Աստուծոյ դիցուք ի

սիրոս մեր` , որ կը գանուի ``Առաւօտեան ժամերգութեան`` վեր-
ջաւորութեան ``Բանից իմոց ունկն դիր, Տէր`` սաղմոսէն առաջ:
Այս բարոզը կարելի է գանել Երուսաղէմ ապուած, 1947, գրպանի փոք-
րիկ ժամագիրքի 807-808 էջերուն վրայ:

6.- Հասկնալի պէտք է ըլլայ որ արտօնուած շէք կատարել այն Խոր-
հուրդները որոնք ձեռնադրուած եւ օծուած քահանային յատուկ են, այ-
սինքն Մկրտութիւն, Դրոշմ, Արձակում, Ս. Պատարագի մատուցում, Պր-
սակ Ամուսնութեան: Ինչպէս նաեւ որեւէ արարողութիւն ուր առարկայ
մը օրհնելու կամ միւտոնով օծելու անհրաժեշտութիւն կայ: Օրինակ՝
Ջուր օրհնել, տուն օրհնել, Քաղման Կարգին մէջ՝ հող օրհնել, զե-
րեզման կնքել, ``Անդաստան`` կատարելով ``օրհնել``, Ջրօրհնէքի ա-
տեն Ջուրը օրհնել եւ միւտոն կաթեցնել, եւայլն: Բայց կարելի է Հայ-
րապետական Մաղթանք եւ Դոնքացէքի, Խաւարման Գիշերի Կարգը կատարել:

Առյն հրահանգը կը յանձնենք ձեր ուշադրութեան ի գործադրութիւն:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 24505
Մարտ 17, 1975

Բարեշնորհ
Կարապետ Արկ. Հարութի
Ռէյսին.

Սիրելի Կարապետ Սարկաւազ,

Որքան ժամանակ որ Ռէյսինի մեր համայնքը հոգեւոր հովիւ չունի՝
ձեզի մասնաւոր արտօնութիւն կը շնորհենք հետեւեալ կրօնական արարո-
ղութիւնները կատարելու եւ հաւատացելոց հոգեւոր կարիքը մատակարա-
րելու:

1.- Կատարել Հայց. եկեղեցւոյ բոլոր ժամերգութիւնները, բացի այն
մասերէն ուր ձեռնադրեալ եւ օծեալ բահնայի մը ներկայութիւնը անհրա-
ժեշտ է: Օրինակ, ժողովուրդը օրհնել, ``Խաղաղութիւն ամենեցուն`` ը-
սել եւ ժողովուրդին վրայ խաչակնքել:

2.- Հոգեհանգստեան Կարգ կատարել, նոյն հասկացողութեամբ:

3.- Սուրբ Պատարագի ընթացքին սրբազործուած եւ ապա սրբառուփին
մէջ պահուած Սուրբ Հաղորդութենէն մատակարարել հիւանդներուն՝ աու-
ներու եւ հիւանդանոցներու մէջ:

4.- ``Ճաշու Պատարագի`` Կարգը կատարել Կիրակի առաւօտ կամ այլ
առիթներով, եւ նախ բան արձակումը, սրբառուփին մէջ պահուած Սուրբ
Հաղորդութենէն մատակարարել հաղորդուելու պատրաստ եղողներուն:

5.- Խոստովանանքի համար գործածել հաւաքական խոստովանանքի բանա-
ձեւը, առանց վերջին տունին, այսինքն ``Հայր Սուրբ, գրեզ ունիմ միջ-
նորդ հաշտութեան եւ բարեփոս:`` Նաեւ առանց ``Ողորմեսցի բեզ
մարդասէրն Աստուած`` արձակումի բանաձեւը արտասանելու: Ասոնց
փոխարէն կարգալ Սարկաւազի Բարոզը՝ ``Եկեալքս ի խոստովանութիւն ա-
պաշխարութեան՝ հաւատով գոյս միածին Որդւոյն Աստուծոյ դիցուր ի

սիրոս մեր , որ կը գտնուի ``Առաւօտեան ժամերգութեան`` վերջաւորութեան ``Բանից իմոց ունկն դիր, Տէր`` ստղմոսէն առաջ: Այս բարոզը կարելի է գտնել Երուսաղէմ սպուած, 1947, գրպանի փորրիկ ժամագիրրի 307-308 էջերուն վրայ:

6.- Հասկնալի պէտք է ըլլայ որ արտօնուած շէք կատարել այն Խորհուրդները որոնք ձեռնադրուած եւ օծուած քահանային յատուկ են, այսինքն Սկրտութիւն, Գրոշմ, Արձակում, Ս. Գատարագի մատուցում, Գրասկ Ամուսնութեան: Ինչպէս նաեւ որեւէ արարողութիւն ուր առարկայ մը օրհնելու կամ միւտոնով օծելու անհրաժեշտութիւն կայ: Օրինակ՝ ջուր օրհնել, տուն օրհնել, թաղման Կարգին մէջ՝ հող օրհնել, զերեզման կնքել, ``Անդաստան`` կատարելով ``օրհնել``, Ջրօրհնէքի ատեն ջուրը օրհնել եւ միւտոն կաթեցնել, եւայլն: Բայց կարելի է Հայրապետական Մաղթանք եւ Դոնքացէքի, Խաւարման Գիշերի Կարգը կատարել:

Առյն հրահանգը կը յանձնենք ձեր ուշադրութեան ի գործադրութիւն:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Թիւ 24598
Յուլիս 21, 1975

Մեծայարգ
Տիար Փօլ Զօպանեան
Ատենապետ Ժիական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Ռէյսին.

Սիրելի Տիար Փ. Զօպանեան,

Գրած էինք ձեզի որ Արժշ. Տ. Արաէն Աւագ Լահա-
նայ Աշտեան Ռէյսինի մեր համայնքին հոգեւոր հովիւի
պաշտօնը պիտի ստանձնէ Օգոստոս 24ին:

Հովիւներու տեղափոխութեան ժամանակացոյցին մէջ
փոփոխութիւն մը մտած ըլլալով կը յայտնենք ձեզի որ
Տ. Արաէն իր ընտանիքով Ռէյսին պիտի զտնուի Օգոս-
տոս 15ին, եւ Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնին,
Օգոստոս 17ին, Ս. Պատարագ մատուցանէ եւ հոգեւոր
հովիւի պաշտօնին ձեռնարկէ:

Համեցէք այս պարագան նկատի ունենալ եւ ըստ այ-
նրմ կարգադրութիւններ ընել Տէր Արաէնին հետ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԼԵԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 24484
Փետրուար 28, 1975

Մեծայարգ
Տիար Փօլ Չոպանեան
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ժիական Խորհուրդի Ասենապետ
Իէյսին.

Յարգելի Տիար Փ. Չոպանեան,

Առաջած ենք Փետրուար 15, 1975 թուակիր 2եր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Յունուար 26ին գումարուած համայնքիդ ժիական ժողո-
վին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը,
եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած ան-
ձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Եկեղեցւոյդ ժիական ժողովը տեղի ունեցած է
Քեմական Անոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-
նենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցան-
կին:

Այս առթիւ կը փափաքինք 2եր ուշադրութեան յանձնել Քեմական Անո-
նադրութեան թիւ 28 յօդուածը, ուր կ'ըսուի.- ժիական Խորհուրդի ան-
դամները կը շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ իրենց յաջորդներուն
Առաջնորդին կողմէ հաստատումը եւ պաշտօնի անցնիլը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ
արդիւնաւոր գործունէութեան արի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ
եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ


ՔՈՐԳՈՄ ԱՐԺԵԳԻՍԿՈՐԱՍ
Առաջնորդ

Փօլ Չոպանեան
Փօլ Քեւակեան
Հատուրա Գարրիէլեան
Մանուկ Ճանսուզեան

File

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ՉԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
ԱՐՏԷՆ ԱՒԱԿ ԲՆՆՅԱՆ ԲՆԹԵԱՆ, ՀՊԿ

REV. ARTEN ASHJIAN, Pastor
TEL. 689-0531

9 Յունուար 1976

Գեղաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գեղաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Միական Խորհուրդիս երէկուան նիստին մէջ իմ թելադրութեամբ
Խորհուրդը որոշեց օգտուել Ձեր ծուխիս տալիք այցելութենէն, կազմա-
կերպելով Հանդիպում մը միական Խորհուրդին եւ թեմական պատգամաւոր-
ներուն հետ: Նաեւ, եթէ ձեր ժամանակը կը թոյլատրէ, Հանդիպում մըն
ալ ունենալ ծուխիս ենթակայ կազմակերպութեանց վարչութիւններուն
հետ միացեալ ժողովի մը մէջ:

Որքան որ կրցած եմ տեղեկանալ եկեղեցւոյս 50ամեակի տօնակատարու-
թեան յանձնախումբի ատենապետէն, Շաբաթ, Յունուար 31ին եկեղեցւոյս
սրահին մէջ տեղի պիտի ունենան մարզական խաղեր, իսկ երեկոյեան
Կիրակատից ժամերգութենէն ետք ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ
նոյն սրահին մէջ: Կիրակի, ձեր մատուցանելիք Ս. Պատարագէն ետք
50ամեակի Հանդիսութեան ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Միլուոքթի
Ռամատա Ին Հիւրանոցին մէջ, ժամը 2ին:

Եթէ յարմար կը գտնէք, վերը թելադրուած Հանդիպումներուն համար
կարելի է վերապահել Ուրբաթ, Յունուար 30, կամ Փետրվար 2, Երկուշաբթի
երեկոյեան մին: Կը խնդրեմ որ կարելի եղածին չափ կանոնախ գիտ տեղեակ
ընէք ձեր ժամանակէն պահուելու վայրի մասին:

Այս առիթով հարկ կը զգամ աւելցնել թէ եկեղեցւոյս Դպրաց Դասի
անդամներու եւ Ս. Սեղանի սպասարկողներու շապիկները անբաւարար են,
մեծ մասը չափազանց կարճ, եւ ոմանք ալ մաշած ըլլալով: Բանիցս դպրապե-
տին եւ այլոց խօսած եմ, եւ կացութեան մէջ փոփոխութիւն մը չտեսնելով,
հարցը բերի Միական Խորհուրդի ուշադրութեան: Որոշուեցաւ որ ղիմենք
ձեզ (եւ կամ Դպրաց Դասերու Միութեան) ուղղութիւն խնդրելու կերպասի,
ձեռքի եւ կարողի աղբիւր գտնելու համար: Այսօր պիտի գրեմ նաեւ Պրճ
Երէցեանին, յայտնելով անոր ձեզ այս մասին գրած ըլլալս:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. Աշոյղ

խոնարհ ծառայող ի Բրիսպոս
Chrysos Akchanyan
Արտէն Ա. ԲՆՆՅԱՆ ԱՂՃԵԱՆ

Քիւ 24711
Յունուար 9, 1976

Արժանաշնորհ
Տ. Արաէն Ա. Բհնյ. Աշճեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տ. Արաէն,

Կը փափաքինք մեր շնորհակալութիւնը յայտնել ձեզի՝ որ Դեկտ. 19ին Առաջնորդարանիս Թեմական Խորհուրդի Առենապետ դատաւոր ժան Նաճարեանի եւ մեզի հետ ներկայ զանուեցաք Ատութ Միլուոքիի Ժխական Խորհուրդի ժողովին, որ տեւեց մինչեւ առաճօքեան ժամը 4.00:

Այս առթիւ, կը հաստատենք Ռէյսինի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ համայնքին մեր այցելութեան թուականը՝ 1976 Յունուար 30էն Փետրուար 2:

Ուրբաթ, Յունուար 30, Միլուոքի կը հասնինք կ.ե. ժամը 4.44ին Նորթ Սէնթրըլ օդանաւային ընկերութեան թիւ 55 թռիչքով: Նոյն երեկոյեան ժողով կ'ունենանք Ժխական Խորհուրդիդ հետ: Ետքաթ երեկոյ՝ հանդիպում եկեղեցական կազմակերպութեանց վարչութեանց հետ: Կիրակի առաւօտ՝ եկեղեցական պաշտամունք: Երկուշաբթի ցերեկ՝ կը փափաքինք հանդիպում ունենալ շրջանի հոգեւորականներուն հետ:

Ետքաթ ցերեկուան եւ Կիրակի օրուան համար բարի եղէք դուք կազմել յայազիրը: Իսկ երբ նշդէք Երկուշաբթի օրուան հոգեւորականներուն հետ մեր ունենալիք հանդիպումին ժամն ու վայրը՝ համեցէք տեղեկացնել Հ. Վարուժան Գապառասեանին եւ Հ. Արշակ Խաչատուրեանին:

Նիւ Եորք կը վերադառնանք Երկուշաբթի, Փետրուար 2, կ.ե. ժամը 6.10ին՝ օդանաւային նոյն ընկերութեան թիւ 58 թռիչքով:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Յուլիս 20, 1976

Արժանաշնորհ
Տ. Արտէն Ա. Էհնյ. Աշճեան
Հոգեւոր Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Թէյսին.

Արժ2. Տէր Հայր,

Ստացած եմ Յուլիս 1, 1976 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ ձեր Հայ Դպրոցէն տրամադրելի ուսուցիչ շունենալով ուսուցիչներու Պատրաստութեան Յայտագրին կը փափաքիք դուք անձնապէս մասնակցիլ:

Ձայ Դպրոցներու ուսումնական Խորհուրդը ուրախութեամբ ընթացք կու տայ ձեր փափաքին: Սակայն այս առթիւ յարմար կը նկատեմ ձեր ուշադրութեան յանձնել որ Հոգեւոր Հովիւներու մասնակցութեան միակ ``անպատհուրիւնը`` ձիական իրենց պարտականութիւններն են, որոնք երբեմն կը պահանջեն Հովիւներու ներկայութիւնը ծուխէն ներս:

Նման փորձառութիւն մը ունեցանք անցեալ տարի, երբ վերջին օրը յայտագրին մասնակցող հոգեւորականը տեղեկացուց թէ ձիական պարտականութեան մը պատճառաւ պիտի չկարենայ ներկայ գտնուիլ: Եւ այդ պատճառաւ մէկ ուսուցչի տեղ պարապ մնաց:

Վստահ եմ որ այսպիսի պարագայի մը պիտի կարենաք այլ կարգադրութիւն մը ընել:

Ուրեմն, յայտագիրը կը սկսի Երկուշաբթի, Օգոստոս 2, առաւօտեան ժամը 9.00ին, եւ կը վերջանայ Շաբաթ, Օգոստոս 7, կէօթէ ետք ժամը 2.00ին՝ կէսօրուան ճաշէն ետք:

Հետու տեղերէ եկող ուսուցիչները պարտին նիւ Եորրի ``Լա Կուարտիա`` օդակայանը ժամանել Կիրակի, Օգոստոս 1, կէսօրէ ետք ժամը 2.00-4.00ի միջեւ՝ որպէս զի կարենանք բոլորը դիմաւորել միասնաբար: Առաջնորդարանի մէջ, նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 5.00-7.00 տեղի պիտի ունենայ անպաշտօն ընդունելութիւն մը, ապա մասնակցողները պիտի առաջնորդուին նախապէս ապահովուած պանդոկը:

Յաջորդ քանի մը օրերու ընթացքին Ձեզի պիտի դրկուի օդանաւի
`` ռաց `` տոմսակ մը: Համեցէր տեղեկացնել թէ ո՞ր ժամուն կը ծրագ-
րէք `` Լա Կուարթիա `` օդակայանը ժամանել:

Ձեզ վերստին տեսնելու ցանկութեամբ,

Խորին Յարգանքով՝

ՆԱԹԱԿԱՐ ԷՐԷՓԷԼԵԱՆ
Ատենապետ ՈԼՏՈՒՄՆԱԿԱՆ Խորհուրդի

Քիւ 24972

Հոկտեմբեր 21, 1976

Արժանաշնորհ
Տ. Արաէն Ա. ԲՆՅ. Աշնեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ ն
Նախագահ Գիական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Արաէն,

Առաջած ենք Հոկտեմբեր 14 թուակիր ձեր նամակը զոր նկատի ա-
ռինք թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 18 նիստին մէջ:

Տիկնանց Միութեան Կանոնադրին մէջ Յօդուած ԺԳ., հատուած 1
եւ 2 ուղղութիւն կու տան թէ ինչ կերպով տեղական Տիկնանց մաս-
նաճիւղ մը Կանոնադրի որեւէ մէկ տրամադրութիւնը կրնայ փոխել:
Բայց մինչեւ առաջարկուած փոփոխութեան մը վաւերացումը թեմական
Խորհուրդին եւ Առաջնորդին կողմէ, Տիկնանց մասնաճիւղը պարտաւոր
է հետեւիլ Կանոնադրութեան պայմաններուն:

Հաճեցէք այս ուղիղ ընթացքը յիշեցնել Տիկնանց Միութեան եւ
Գիական Խորհուրդին, եւ մեզի յղել պաշտօնական արձանագրութիւննե-
րը եւ որոշումները, զանոնք ենթարկելու համար Առաջնորդին եւ թե-
մական Խորհուրդի որոշումին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՐՈՍ
Առաջնորդ

Քր. 24972

Հոկտեմբեր 21, 1976

Արժանաշնորհ
Տ. Արաէն Ա. Մհայ. Աշճեան
Հովիւ Ա. Մեսրոպ Սկեղեցւոյ Ն
Նախագահ Թիւական Խորհուրդի
Ռէյսին.

Արեւիկ Տէր Արաէն,

Առաջած ենք Հոկտեմբեր 14 թուակիր ձեր նամակը գոր նկատի ա-
ռինք Թիւական Խորհուրդի Հոկտեմբեր 18 նիստին մէջ:

Տիկնանց Միութեան Կանոնագրին մէջ Յօդուած ԺԳ., հատուած 1
եւ 2 ուղղութիւն կու տան թէ ինչ կերպով տեղական Տիկնանց մաս-
նաճիւղ մը Կանոնագրի որեւէ մէկ արամադրութիւնը կրնայ փոխել:
Բայց Մինչեւ առաջարկուած փոփոխութեան մը վաւերացումը Թիւական
Խորհուրդին եւ Առաջնորդին կողմէ, Տիկնանց մասնաճիւղը պարտաւոր
է հետեւիլ Կանոնադրութեան պայմաններուն:


Հանցելք այս ուղիղ ընթացքը յիշեցնել Տիկնանց Միութեան եւ
Թիւական Խորհուրդին, եւ մեզի յղել պաշտօնական արձանագրութիւննե-
րը եւ որոշումները, զանոնք ենթարկելու համար Առաջնորդին եւ Թե-
մական Խորհուրդի որոշումին:

Աիրոյ ողջունել

ՔՈՐԳՈՍ ԱՐՔԵԳԻՍԱՌԳՈՍ
Առաջնորդ

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԷՆ ԱՒԱԳ ԲՆԵՑ. ԱՇՃԵԱՆ, ՀՊԿ

REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 639-0531

Հոկտ. 14, 1976

Գերաշնորհ

Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Ի հետեւումն Ձեր Մարտ 8, 1976 թուակիր նամակին ի մասին Տիկնանց Միութեան վարչութեան ընտրութեան կերպի մասին, ինչպէս նաեւ անձամբ Օգոստոս 16ին վարչութեան Ձեր տուած բացատրութիւններուն, Տիկնանց Միութիւնը Սեպտ. 30ի իր ընթացիկ անդամակն ժողովին մէջ նկատի առաւ Միութեան Կանոնադրութեան Յօդուած Թ Հատուած 3, 4 եւ 5: Ժողովը որոշ գրաւոր կոչը ստորագրած էր ներկայ վարչութեան ատենապետ Տիկ. Վար Զիրքինեան, զոյգ մը գաղտնի քուէարկութեամբ յայտնեց իր ընդդիմութիւնը վերոյիշեալ յօդուածի երեք հատուածներու տրամադրութեանց: Այսպէս, 26 քուէարկողներէն 22ը ՈՁ եւ 4ը ԱՅՈ քուէարկեցին Հատուած 4ի կապակցութեամբ: Դարձեալ, 26 քուէարկողներէն 24ը ՈՁ եւ 2ը այո քուէարկեցին Հատուած 5ի կապակցութեամբ: Ըստ այսմ, Տիկնանց Միութեան փափաքն է որ ըստ տեղական սովորութեան վարչութեան անդամները ընտրուին միայն մէկ տարուան համար, եւ պաշտօնեաները ընտրուին միաժամանակ անդամական ժողովին կողմէ եւ ոչ թէ ընտրուած վարչական խումբին կողմէ:

Միական Խորհուրդի Հոկտ. 5ի ժողովին, որոշ ներկայ եղան ծուխիս երեք թեմական պատգամաւորները ինչպէս նաեւ Տիկնանց Միութեան վարչութեան դիւանի երեք գլխաւոր պաշտօնեաները, ներկաներ փափաք յայտնեցին որ Տիկնանց Միութիւնը արտօնուի իր յառաջիկայ ամիս կատարելիք ընտրութիւնները կազմակերպել ըստ նախկին, տեղական դրութեան:

Ներկայիւս կը յայտնեմ այս պարագաները Ձեր բարեհաճ տնօրինութեան:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս, աշոյղ

խոնարհաբար

Armenian Signature
Արտէն Աւագ ԲՆՆՅ. ԱՇՃԵԱՆ

Քիւ 24964
Հոկտեմբեր 15, 1976

Արժանաշնորհ
Տ. Արտէն Ա. ԲՏՆԿ. Աշճեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
մէջսին.

Սիրելի Տէր Արտէն,

Երբ Ս. Էջմիածին կը գտնուէինք Թուրքիոյ Հայոց Գաորիարք
Ամեն. Տ. Ենորհք Արք. Գալուստեան մեզի տեղեկացուց թէ ար-
ւոյս Յոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին կը ծրագրէ
Միացեալ Նահանգներ եւ Գանատա այցելել:

Համաձայն Գաորիարք Արքազան Հօր կազմած ժամանակացոյցին՝
Յոյեմբեր 13-16 պիտի գտնուի Եիզակոյի շրջանը: Արքազան Հայ-
րը մեզի յայանեց որ իր այս այցելութեան ընթացքին հրապար-
կային հանգանակութիւն պիտի շկատարէ:

Վստահ ենք որ Յորին Ամենապատուութեան այցելութեան առթիւ
պատշաճը պիտի տնօրինէք Ս. Գաաարազի մատուցման եւ ի պատիւ
իրեն սարժուելիք հանդիպութեան կապակցութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 25081
Յունուար 20, 1977

Արժանաշնորհ
Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշնեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Իէյսին.

Սիրելի Տէր Արտէն,

Վաստի ենք որ վիրաբուժական ձեր գործողութենէն ետք՝
այժմ ապաքինման շրջանի մէջ կը գտնուիք: Չեզի կատարեալ
եւ ամբողջական առողջութիւն կը մաղթենք:

Ստացած ենք Յունուար 15, 1977 թուակիր ձեր նամակը,
եւ ձեր տուած բացատրութիւնները հասկնալի են մեզի համար:
Եթէ կարելի է՝ միայն ձեր յիշած գոյգ նամակներուն օրի-
նակները համեցէք արտագրել կամ նկարահանել եւ ղրկել Ա-
ռաջնորդարան: Եթէ ապագային նոյն շրջանէն գրութիւններ
երեւան հանէք, համեցէք օրինակներ ղրկել Առաջնորդարան:


Ներփակ կը ղրկենք Ս. Էջմիածնի օրացոյցը: Առաջնոր-
դարանիս պատի օրացոյցը շուտով լոյս պիտի տեսնէ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԷՆ ԱՒԱԳ ՔԷՆՅ. ԱՇՃԵԱՆ, ՀՊԿԻ

REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 689-0531

15 Յուլիուար 1977

Գերաշնորհ

Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Ամերիկայի
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Ստացած եմ Ձեր Յուլիուար 11, 1977 թուակիրը Առաջնորդարանէն
ծուխիս 1925-1944 թուականներուն յղուած պաշտօնագիրներու վերաբերմամբ:

Հարկ է բացատրեմ որ այս խնդրով Ձեր ղրկած Դեկտ. 10, 1976
թուակիր շրջաբերականը հիւանդութեանս պատճառաւ կարելի չէր եղած
Ծխական Խորհուրդի ժողովին ներկայացնել մինչեւ ամսոյս 4ը, երբ իմ
հրաւերով հերթական ժողովը տեղի ունեցաւ տանս մէջ: Այդ առթիւ կար-
ողով Ձեր վերոյիշեալ շրջաբերականը շեշտեցի կարեւորութիւնը Ձեր
հրահանգին: Սակայն, տրուած ըլլալով որ,

ա) խնդրոյ առարկայ հին պաշտօնագիրները բոլորովին Հայերէն են,
մինչ մեր ներկայ Ծխական Խորհուրդի անդամները մէկ բացառութեամբ
անտեղեակ են Հայերէնի,

բ) Եկեղեցիս բազում տարիներ, մանաւանդ ի հնումն զուրկ եղած է
ղիւանական գրոցներու յարմարութիւններէ,

գ) Իր յիսուն տարիներու գոյութեան գրեթէ կէսը ծուխս զուրկ մնա-
ցած է մնայուն հովիւէ, եւ մինչեւ անգամ ունեցած է արխիւներու
վերաբերեալ անփոյթ հովիւներ,

դ) 1972ին երբ նորակառոյց եկեղեցիէն ներս փոխադրուած են հին
եկեղեցւոյ գոյքերը այդ առթիւ պատահած են կորուստներ,

ե) Ինչպէս շատ մը ծուխերու մէջ, վերոյիշեալ 1925-1944 տարիներ-
ուն պաշտօնական գրութիւններ եւ տոմարներ փոխանակ եկեղեցւոյ
շէնքէն ներս պահուելու կը մնային այս կամ այն հոգաբարձուի տան մէջ,
եւ հետեւաբար ենթակայ էին անհետանալու,

զ) 1925-1944 շրջանին իբր ատենապետ կամ ատենադպիր ծառայած հոգա-
բարձուները գրեթէ առանց բացառութեան մեռած գացած են,

է) Ծխական Խորհուրդիս տրամադրութեան տակ գտնուող թղթածրարներուն
մէջ հին շրջանի նամակ կամ պաշտօնագիր գոյութիւն չունին,

Ձեր այս հրահանգը ծուխիս պարագային փութանակի եւ լրիւ գործադրել պիտի բարի դժուարութեանց:

Եւ որպէսզի չմտածէք թէ պարտականութիւն ստանձնելու չկամութիւն կը մատնեն վերեւ տրուած պատճառաբանութիւնները, կը փութամ տեղեկացնել թէ Ձեր Յունուար 11 թուակիրը ստանալէս մէկ օր առաջ, գիտակցելով որ առանց իմ միջամտութեան այս գործը գոհացուցիչ կերպով գլուխ հանել անկարելի պիտի ըլլար, ձեռնարկեցի պրպտում ընել եկեղեցւոյ պատմութեան հին շրջանի հոգաբարձական ժողովներու ատենագրութեանց մեծկակ տոմարի մը մէջ: Այդ տոմարէն, որ կ'ընդգրկէ 1918-1934 տարիները մի քանի տարիներու ընդհատումներով, ջանացի ստուգել յաջորդական շրջաններու ատենապետի եւ ատենադպիրի անունները: Մինչեւ 1934 ցարդ արձանագրածներէս միայն մէկ անհատ ողջ է՝ Տիար Թորոս Մատաղճեան, որուն հետ հաղորդակցիլ փորձած եմ: Այս պրպտումի ընթացքին երկու տեղ տոմարին մէջ հանդիպած եմ Առաջնորդ Տ. Տիրայր Արք.ի եւ տեղապահ Տ. Սերովբէ Ա. Քհնյ. ներշապուհի ստորագրութեամբ ստացուած նամակներու ամբողջական արտագրութիւններ: Եթէ հնարուող չըլլայ այդ նամակներու իսկականը գտնել, ընդունելի է որ այդ արտագրութեանց պատկերահանումը ընենք եւ այդ կերպով ձեռք բերուած օրինակները դրկենք Առաջնորդարան:

Սրբազան Հայր, այս գործը հետապնդել մեր պայմաններուն մէջ աւելի երկար ժամանակի պիտի կարօտի, եւ արդիւնքի մասին ալ լաւատես չեմ: Ամէն պարագայի, զանցառու պիտի չըլլամ գործին հանդէպ:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. աջոյդ
ակնածանօք՝ խոնարհ ծառայող
Ապրէլ Կ. Մայ. Աշտեան
Արտէն Ա. Քհնյ. Աշտեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

Արժանաշնորհ
Տ. Արամն Ա. Քհնյ. Աշոտեան
Հովիւ Ս. Մեսրոպ Ոկեղոցւոյ
Նախագահ սրբական Խորհուրդի
Պէյսին.

Սիրելի Տէր Արամն,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Շուրջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրազործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորթ քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- | | |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան | Ատենապետ |
| Տիար Սուրէն ֆէսմեան | Գանձապահ |
| Տիար Եղուարդ Պաշեան | Բ. Գանձապահ |
| Տ. Գառնիկ Քհնյ. Հալլամեան | Բարտուղար |
| Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան | Բ. Բարտուղար |
| Տիար Իիչըրտ Գ. Կրէկըրի | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախուժմբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ զանել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի զումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.

1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուքճեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախուժք մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախուժքի անդամներուն անունները համեմատք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախուժքին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեմատք զանել 50 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ճանչցուած Հայկ Գավուքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ

Առաջնորդ

Թիւ 25442

Հոկտեմբեր 27, 1977

Արժանաշնորհ
Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Արտէն,

Այսու կը տեղեկացնենք թէ համայնքիդ պատգամաւորներու պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք պատգամաւորներու եւ անոնց անձնափոխանորդներուն համար՝ Թեմական Կանոնադրութեան 14-9. եւ 54 յօդուածներուն համաձայն:

Ըստ ձեր Եկեղեցւոյ 1976 տարուան տեղեկագրին՝ համայնքդ կը հաշուէ 270 տրատու անդամ, ուրեմն ծխական ժողովդ իրաւունք ունի կատարելու երեք նոր պատգամաւորներու ընտրութիւնը:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուար ամսուան սկիզբը՝ որպէս զի կարելի ըլլայ զիրենք հրաւիրել Թեմական Պատգամաւորական 76րդ Տարեկան ժողովին, որ պիտի գումարուի Մայիս 4-6, 1978, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ Տիթրոյթ Միշիկընի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներու ինքնութիւնը հաստատող վկայագիրը, Հոգեւոր Հովիւի եւ ծխական Խորհուրդի Ատենապետի եւ Ատենադպիրի կողմէ ստորագրուած, Առաջնորդարան ղրկէք ընտրութիւններէն անմիջապէս ետք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 25124
Փետրուար 14, 1977

Արժանաշնորհ
Տ. Արաէն Ա. Էհնյ. Աշտեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ,
Նախագահ ժխական Խորհուրդի
Մէյսին.

Սիրելի Տէր Արաէն,

Առաջած ենք Փետր. 2, 1977 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 30ին գումարուած հա-
մայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի շորս
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժխական ժողովը տեղի ունեցած է թեմա-
կան Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-
նենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած
ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորըն-
տիր Գիււանի անդամոց անբւննները:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ
ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան աա-
րի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգնւոր շխնութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունելի

ՅՈՐԳՈՍ ԱՐԷՇԳԻՍԱՆՊՈՍ
Առաջնորդ

Ստեփան Գարուիեան
Սարգիս Զիրբիեան
Ճորճ Սթիվոֆ
Հարրի Գարոնեան

Քիւ 25289
Ապրիլ 20, 1977

Արժաշանորհ
Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ռէյսին.

Սիրելի Տէր Արտէն,

Ներփակ կը գտնես հետեւեալը.

- 1.- Հայր Արշէնին պատրաստած պրակը Հանգստեան ժամու արարողութեան.
- 2.- Տ. Տաճարին պատրաստած Անզլերէն թարգմանութիւնը նոյնին.
- 3.- Լոնտոնէն Միշա Ֆիւտեանի թարգմանութիւնը նոյն ժամերգութեան մէջ գործածուող նարեկի երեք գլխուկներուն -- ``Ընկալ բաղցրութեամբ``, ``Որդի Աստուծոյ`` եւ ``Աստուած յաւիտենական``--.
4. Միրիման Գիրեանի պատրաստած ապագրական մէկ էջ մը իբրեւ նմոյշ.
5. Հայերէն-Անզլերէնի տառադարձութեան ուղեցոյց մը:

1.- 2. Արշէնի պատրաստածը պէտք է գործածել Հայերէն եւ Անզլերէն զլիակարգութեանց, պաշտօնեաներու, եւ Սաղմոսներու զլիահամարներու յիշատակութեանց համար: Նաեւ Սաղմոսներու իմբական արտասանութեան նպատակով իւրաքանչիւր տունի առաջին մասը երկրորդէն զտեւելու համար դրուած շեղ գիծերուն հետեւելու համար: Սաղմոսի տուներու քաժանումը նախընտրելի է կատարել շեղ գիծին փոխարէն աստղանիշ(*) մը գործածելով, ինչպէս Տ. Տաճար իր Անզլերէն թարգմանութեան մէջ կատարած է:

2.- Տ. Տաճարին դրկած Անզլերէն թարգմանութիւնն է որ պիտի գործածենք, բացի նարեկի զլուկներու քաժինէն որ Միշա Ֆիւտեանի թարգմանութեամբ պիտի ըլլայ: Հ. Արշէն չգիտեմ ուրկէ առած է իր ``անբաւարար`` թարգմանութիւնը: Դժբախտաբար Տ. Տաճարինը բաղդատելու պատեհութիւն չունեցայ:

3.- Տառադարձութիւնը որպէս զի նոյնակերպ ըլլայ նոյն հատորին մէջ, հաճէ հետեւիլ ներփակուած ցուցակին: Չնախատեսուած բարդութիւններ եթէ

տեղծուին կարգ մը քտոնրու եւ վանկերու տառադարձութեան պարագային, հաճէ ինծի խմացնել:

4.- Երկար Աղմոսներու տունները, որոնք փոխն ի փոխ կ'ըսուին երկու փոխասացներու կողմէ կամ դաս առ դաս, իրարմէ գառորոշելու համար գործածել զծիկ (-) եւ աստղանիշ (*): Յոյն դասին բաժին ինկող տունները զծիկով կը սկսին (-) իսկ դէմի դասին Աղմոսները աստղանիշով (*):

5.- Իւրաքանչիւր քարոզի, աղօթքի, երգի վերելը պաշտօնեաներու նըշումը -- Լահանայ, Յարկաւագ, Գպիրքն, եւն.-- 2. Արշէնի պրակին օրինակովը կաարել, եւ ոչ Տ. Տանաին որ նախադասութիւն կազմած է՝ ըսելով "ՏՏԷՆ աչք ըրիսթ շէլ սէյ", եւն.:

6.- Նարեկէն տոնուած երեք գլուխներէն "Անկալ քաղցրութեամբ" եւ "Որդի Աստուծոյ" կտորները քնազրին մէջ դնել ըստ կարգի, իսկ "Ասուած յաւիտենական" գլուխը վերջաւորութեան դնել իրրեւ յաւելուած:

7.- Քուղթին մեծութիւնը Յով 11 է եւ էջը լայնքին պէտք է դարձնել եւ երեք սիւնակի վերածել:


Տակաւին երգերուն ձայնագրութիւնն ալ պէտք է պատրաստենք:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԵՈՂՈՍ
Առաջնորդ

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԷՆ ԱՒԱԳ ՔԷՆՅ. ԱՇՃԵԱՆ, ՀԿԻ

REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 639-0531

9 Օգոստոս 1977

Գեղաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամե ըիկայի
Նիւ Եորթ, Ն. Ե.

Գեղաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Ընդ առաջ երթալով յընթացս ժողովի իմ յայտնած փափաքին, Մխական Խորհուրդը երէկ հաւանեցաւ որ ամսոյս 28ին մասնակցիմ Բարեշնորհ Մանուկ Սրկ. Բէլէկեանի քահանայական օժման արարողութեանց, այն հասկացողութեամբ որ ուղեւորութեան եւ օթեվանելու ծախքերը ես պիտի հոգամ:

Ամիսներ առաջ հաւանած էի Երթակոյի արուարձան փէյլըս Հայցի Ս. Յովակիմ եւ Ս. Աննա ծուխէն օրիորդի մը պսակադրութիւնը կատարել Շաբաթ, Օգոստոս 27ի յետմիջօրէին: Հետեւաբար Մանուկ Սարկաւազի ընծայման չեմ կրնար հասնիլ: Հաւանաբար Կիրակի առաւօտ կանուխ Սարգիս Պօյաճեանի տունէն ճամբայ ելնենք ես եւ Երէցկիւնը կառքով ուղղակի օժման եկեղեցին հասնելու:

Ամսոյս երկրորդ կիսուն կ'ակնկալենք ժամանումը Պէյրուսէն իմ հանգուցեալ քրոջ դուստր 15ամեայ Ծովիկ Էթահարեանին: Որպէս ուսանող վիզան ստացած է. կը մնայ որ Բաթար բնակող Հայրը ամսոյս կիսուն երթայ Պէյրուս եւ կարգադրէ Ծովիկի սաւառնակով մեկնումը: Մխական Խորհուրդի ատենապետ Ճորճ Սթիվօսին առանձին յայտնած եմ այս պարագան:

Հանգստեան ժամու յաւելուածը մի քանի օրէն կը ղրկեմ:

Մնամ, մտաչելով ի համբոյր Ս. աշոյղ


Խոնարհ ծառայող

Armen H. Ashjian

Արտէն Ա. Բհնյ. Աճեան

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402



Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
ԱՐՏԷՆ ԱՒԱԳ ՔՇՆՅ. ԱՇՃԵԱՆ, ՀՊԿԻ

REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 639-0531

16 Օգոստոս 1977

Գերաշնորհ

Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Անցեալ Սեպտեմբերի սկիզբը եւ տարւոյս Յունուար 15ին Ձեզի ուղղուած անձնական նամակներուս մէջ ջանացած էի բացատրել տնտեսական աննպաստ պայմանները որոնց մէջ հարկադրուած եմ գործել իբրեւ հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ:

Տարւոյս Մայիս 9ին Անգլերէն գրած նամակս կը թուի թէ կարգացուած է Թեմական Խորհուրդի ժողովին մէջ, սակայն գործնականին մէջ կը մնայ անհետեւանք:

Կը յիշէք թէ տարւոյս Փետրվարին մասնաւոր ժամադրութեամբ ուղեւորեցայ մինչեւ Նիւ Եորք եւ տեսակցեցայ Ձեզ հետ, որպէս Թեմիս հոգեւորական պաշտօնիս մէջ յարմար փոփոխութիւն մը կատարել տալու ուղղութեամբ: Նոյն խնդրին անդրադարձաք Դուք վերջերս երբ տարեկան արձակուրդիս առթիւ Նիւ Եորքի շրջանը գտնուելովս, եկայ Առաջնորդարան:

Այս ծուխին մէջ անցեալ մէկ տարուան ընթացքին տեղի ունեցած մի քանի անպատեհ պատահարներ ստեղծած են կացութիւն մը, ուր յանդորրութիւն բոլորին եւ ինձ լաւագոյն է որ ազատ արձակուիմ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ հովիւի պաշտօնէս: Զայս կը խնդրեմ ներկայիս, իրագեկ ըլլալով որ այս ամիսը չլրացած մեր ընտանիքի մաս պիտի կազմէ Պէյրութէն ժամանող 15ամեայ դուստրը հանգուցեալ քրոջս:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. աշոյղ:

Խոնարհ ծառայող

Armen A. Ashjian
Արտէն Աւագ Քշնյ. Աշճեան

Նոյեմբեր 18, 1977

Յարգելի
Տէր եւ Տիկ. Նուպար եւ Հուրիկ Չէօրէքժեան
Ռէյսին.

Սիրելի Տէր եւ Տիկ. Չէօրէքժեան,

Ձեմ գիտեր ի՞նչ բառերով իմ խորին շնորհակալութիւնը յայտնեմ ձեզի՝ ինձի հանդէպ ձեր ցոյց տուած ջերմ ընդունելութեան եւ հիւրասիրութեան, եւ մանաւանդ Հայ Դպրոցներու ժողովներու եւ այլ կարգադրութեանց կապակցութեամբ ձեր յանձն առած յոգնութեան համար:

Հայեցի կրթութեան ի նպաստ ձեր ցուցաբերած հետաքրքրութիւնը եւ խանդավառութիւնը գնահատելի եւ օրինակելի են: Կը մաղթեմ որ ոչ մէկ խոչընդոտ յուսահատեցնէ ձեզ եւ դուք նոյն խանդով շարունակէք ձեր ստանձնած պարտականութիւնները:

Ինչպէս գիտէք Ուոքիկընի մէջ Հայ Դպրոց մը սկսելու համար կարիքը ունին ուսուցչի մը կամ ուսուցչուհիի մը. եթէ այս փրնտրոտութիւն մէջ կարենաք օգտակար հանդիսանալ մեծապէս շնորհակալ պիտի ըլլամ: Անոնք պատրաստ են նաեւ վճարում մը ընել այս աշխատանքը ստանձնողին:

Կրկին կը յայտնեմ իմ շնորհակալութիւնները եւ կը խնդրեմ որ իմ յարգանքները փոխանցէք սիրելի մայրիկին:

Սիրով

Սիլվա Տէր Ստեփանեան
Կրթական Տեսուչ

Նոյեմբեր 18, 1977

Արժանաշնորհ
Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշժեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ռէյսին.

Արժանաշնորհ Տէր Հայր,

Իմ խորին շնորհակալութիւնը կը յայտնեմ Ձեզի եւ Ձեր ազ-
նիւ Երէցկնոջ՝ Ռէյսին այցեւութեանս առթիւ ինձի վերապահած
Ձեր ընդունելութեան եւ հիւրասիրութեան համար:

Ուրախ եմ որ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Հայ Դպրոցի պատասխա-
նատուութիւնները վստահուած են նուիրեալ անձերու, որոնք վըս-
տահ եմ իրենց կարելին պիտի ընեն այս կարեւոր աշխատանքը լա-
ւազոյնս արդիւնաւորելու համար: Առաւել յաջողութիւն կը մաղ-
թեմ Ձեզի:

Առաջութեան եւ յաջողութեան լաւազոյն մաղթանքներով՝

Խորին յարգանօք


Սիլվա Տէր Ատեփանեան
Կրթական Տեսուչ

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 ERIE STREET • RACINE, WISCONSIN 53402

Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՏԵՆ ԱՒԱԳ ՔԶԵՑ. ԱՇԻԱՆ, ԶԿԻ



REV. ARTEN ASHJIAN, Pastor

TEL. 639-0531

Դեկտ. 14, 1977

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Թեմիս Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան Հայր,

Շնորհակալ եմ Ձեր Դեկտ. 9 թուակիր նամակներուն համար:

Համաձայն Ձեր յանձնարարութեան, գրած եմ արդէն Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Միական Խորհուրդի ատենապետին, յայտնելով թէ Յունուար 17, 1978ին պիտի գտնուիմ նոր պաշտօնատեղիս, եթէ Տէրը կամենայ: Այստեղ Միական Խորհուրդի ատենապետ Տիար Ճորճ Սթիվօֆ Ձեր ինձ ուղղած Հայերէն նամակի պարունակութեան տեղեկանքէն կարճ ժամանակ ետք ինձ յայտնեց թէ Միական Խորհուրդը կը մտադրէ ողջերթի ճաշ մը սարքել ինձ եւ Երէցկնոջ ի պատիւ, Յունուար 15ի յետմիջօրէին: Նախապէս Ս. Յովակիմ եւ Աննա Համայնքի ատենապետ Տիար Սարգիս Պոյաճեան խնդրած էր ինձմէ Յունուար 8ի յետմիջօրէին փէյլըս Փարկի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ մէջ ժամապաշտութիւն եւ Ս. Ծննդեան ջրօրհնէք կատարել, եւ այս առիթ ընել որպէսզի այդ Համայնքը ողջերթի ընթրիք մը սարքէ մեր մեկնումին առթիւ: Այս ուղղութեամբ արդէն ծանուցում մը ղրկուած է Ս. Յովակիմ եւ Ս. Աննա Համայնքի ընտանիքներուն:

Գալով Փետր. 4-5 Ձեր հովուական այցելութեան, հիւրանոցի կարգադրութիւն պիտի ընէ Միական Խորհուրդը: Դպրաց Դասուն Համարիմ պատրաստած կարգացոյցին մէջ նշած եմ որ Շաբաթ երեկոյ ժամերգութիւն պիտի կատարուի: Բուն Բարեկենդանի Կիրակին Ս. Պատարագի պաշտօնները Սրբոց Վարդանանց յատկացնել թէ Տօնացոյցի անորոշ թողած ուղիին հետեւիլ, վճիռը հաճեցէք դուք տալ: Առ այժմ մեր դպրապետ Տիկին Պերճուհի Միքայէլեանի երկարատեւ հիւանդութեան հետեւանքով երգիչ խումբը կը ղեկավարէ անոր քրոջ դուստրը Տիկ. Տայէն Ասարեան, որ մի քանի ամիսէ ի վեր Սփրինկֆիլտ (Մաս.) քաղաքէն վերադարձած է Րէյսին:

Հետեւեալներն են Ս. Սեղանի սպասարկող տղաքը (բուրվառակիր կամ քշոցակիր) զորս կը յանձնարարեմ որպէս դպրութեան չորս աստիճաններու թեկնածու. - Կէրի Ագկիւլեան, Նիք Ագկիւլեան, Քայ Դազարեան, Պրայրն Պետրոս Միքայէլեան, Նշան Ագկիւլեան, Աւագ Գրիգորեան, Թոմաս Ճանիկեան, Րիք Քատէմեան, Մայք Մինասեան, Զարլզ Րոյ, Ալեքս Սահակեան, Տէյվիտ Սթիվօֆ: Ընդգծուածները քշոց շարժելէ զատ ուսած են նաեւ խնկարկել եւ կարգ մը քարոզներ եղանակել:

Մնամ, մատչելով ի համբոյր Ս. Աշոյր խոնարհ ծառայող
Արտեն Ա. Աշիան

Սրբազան Հայր, Ձեր Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Միական Խորհուրդի ատենապետ Տիար Ճորճ Սթիվօֆ Ձեր ինձ ուղղած Հայերէն նամակի պարունակութեան տեղեկանքէն կարճ ժամանակ ետք ինձ յայտնեց թէ Միական Խորհուրդը կը մտադրէ ողջերթի ճաշ մը սարքել ինձ եւ Երէցկնոջ ի պատիւ, Յունուար 15ի յետմիջօրէին: Նախապէս Ս. Յովակիմ եւ Աննա Համայնքի ատենապետ Տիար Սարգիս Պոյաճեան խնդրած էր ինձմէ Յունուար 8ի յետմիջօրէին փէյլըս Փարկի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ մէջ ժամապաշտութիւն եւ Ս. Ծննդեան ջրօրհնէք կատարել, եւ այս առիթ ընել որպէսզի այդ Համայնքը ողջերթի ընթրիք մը սարքէ մեր մեկնումին առթիւ: Այս ուղղութեամբ արդէն ծանուցում մը ղրկուած է Ս. Յովակիմ եւ Ս. Աննա Համայնքի ընտանիքներուն:

Թիւ 25618
Փետրուար 16, 1978

Մեծայարգ
Տիար ճորճ Սթիվօֆ
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Աստնապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Սթիվօֆ,

Ստացած ենք Փետրուար 14, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Յունուար 29ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուճարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ էջը՝ անհրաժեշտ ստորագրութիւններով:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ռապրըթ Ակիւլեան
Ճին Հարտըգեան
Ճոզէֆ Ծահնեան

Թիւ 26267

Փետրուար 21, 1979

Մեծայարգ
Տիար Ստեփան Պարութեան
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ժիական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Պարութեան,

Ստացած ենք Փետրուար 8 եւ Փետրուար 18, 1979 թուակիր ձեր նամակները եւ տեղեկագիրները: Կը հաղորդէք թէ Յունուար 28ին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Սահակ Աբկիւլեան
Հարրի Չիրքիւնեան
Միքայէլ Կարուբեան
Միսաք Վիտեան
Ատամ Պարութեան՝ մէկ տարուան շրջանի համար

Քիւ 26724

Փետրուար 21, 1980

Մեծայարգ
Տիար Հարրի Չիրբինեան
Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ
Ժխական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Չիրբինեան,

Ստացած ենք Փետրուար 11, 1980 թուակիր Եկեղեցւոյդ տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Հոգշ. Տ. Վարուժան Ծ. Վրդ. Գապտաճեանի նախագահութեամբ
Յունուար 27ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է
Ժխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէար-
կութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները՝
ըստ ստորեւ տրուած ցանկին: Համաձայն Քեմական Կանոնադրութեան՝ մեր վա-
ւերացումէն ետք է որ կը կազմուի ժխական Խորհուրդի դիւանը:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր դիւանի
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնա-
ւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգե-
ւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԳՈՄ ԱՐԷՆԴԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Դաւիթ Ազարեան
Արթըր Մըսրըլեան
Փիթըր Բագարեան